ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՎԱՐՈՒԺԱՆ ԲՈՒՐՄԱՅԱՆԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՒՐՄԱՅԵԱՆ, ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՈՒԼՈ, ԲՐԱԶԻԼԻԱ

Համազգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել ճանաչելու Ձեզ եւ քաջատեղեակ լինելու ազնիւ հայորդուդ եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեանը, որի շնորհիւ այսօր Ձեր անունն արժանիօրէն քանդակուած է Վեհարանի սիւներին արձանագրուած Մայր Եկեղեցու բարերարների անուանաշարքում:

Առ Աստուած հաւատով եւ առ հարազատ ժողովուրդը սիրով Դուք Ձեր բարի աւանդը բերեցիք Սան Փաուլոյի հայկական եկեղեցու կեանքում, որի նորոգութեան եւ բարեզարդման աշխատանքները փարիներ առաջ կատարուեցին Ձեր հովանաւորութեամբ: Նորոգուած սրբավայրի լուսաւոր կամարների ներքոյ հաւատաւոր հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում՝ մշտապէս երախտագիտութեամբ Տիրոջ օրհնութիւնը հայցելով Ձեր բարի գործերին:

Եկեղեցանուէր ու ազգասէր ոգով եւ ազնիւ նուիրատուութիւններով Դուք Ձեր ծառայութիւնը բերեցիք նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը, որով արժանացաք Երջանկայիշատակ Մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարձր գնահատանքին, ով Ձեր կուրծքը զարդարեց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատուոյ բարձրագոյն՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Մեծարգոյ պրն Պուրմայեան, Երկնաւորի անիմանալի եւ անքննելի կամքով Մեզ է վերապահուել ուրախութիւնը Հայրապետական Սրբատառ այս Կոնդակով Մեր օրհնութիւնը բերել Ձեզ՝ հաստատելով «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանի պարգեւը Ձեզ:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի մեր Եկեղեցու բոլոր բարեպաշտ հաւատացեալներին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 197